ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 1

Ք.Երևան «14»«04» **2015թ.**

ՀՀ աշխատանքի և սոց հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության Տաշիրի տարածքային կենտրոնը (հետագայում Պատվիրատու),ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար **Արտակ Գրիգորյանի**, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա մի կողմից, և Տաշիրի քաղաքապետարանը (հետագայում Կատարող),Ի դեմս քաղաքապետ՝ **Էդգար Արշակյանի**, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Տաշիր քաղաքի Վ.Սարգսյանի փողոց,94 հասցեում գտնվող կաթսայատան շահագործման և սպասարկման համար ծախսերը կատարվելու են Կատարողի կողմից:

1.2 Պատվիրատուն զբաղեցնում է Վ.Սարգսյանի փողոց,94 հասցեում գտնվող շենքից 37.8 քառ մետր տարածք, որը կազմում է շենքի ջեռուցվող տարածքի 14%-ը:

1.3 Պատվիրատուն պարտավորվում է կատարողին փոխհատուցել իր զբաղեցրած տարածքում փաստացի օգտագործած ջեռուցման արժեքը:

1.4 Պատվիրատուն պարտավորվում է 1.1 կետում նշված փաստացի ծախսերի համար վճարել սույն պայմանագրի 4-րդ կետում սահմանված կարգով:

2.Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

2.1 Կատարողը ապահովում է Տաշիր քաղաքի Վ.Սարգսյանի փողոց,94 հասցեում գտնվող Պատվիրատուի կողմից զբաղեցված 37.8 քառ մետր տարածքի ջերմության անխափան սպասարկումը:

2.2 Պատվիրատուն փաստացի կատարված ծախսերի համար վճարում է սույն պայմանագրի 4-րդ կետում նախատեսված ժամկետում:

2.3 Պատվիրատուն ներքին ցանցի վթարները պարտավոր է վերացնել սեփական միջոցներով:

3.Մատուցված ծառայությունների հանձնման և ընդունման կարգը

3.1 Կատարողը Պատվիրատուին ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանում փաստացի կատարված ծախսերի և Պատվիրատուի կողմից 4.1 կետում նախատեսված ծախսերի փոխհատուցման հանձնման- ընդունման ակտ:

3.2 Ակտում նշվում են՝

ա. Փաստացի իրականացված ծախսերի անվանացանկը, քանակը

բ. ծախսերի արժեքը

գ. Փոխհատուցման ենթակա ծախսերի արժեքը

Ակտում կարող են ներառվել ցանկացած այլ տեղեկությունները, որոնց մասին կողմերը անհրաժեշտ կհամարեն նշել:

4. Վճարումների կարգը և չափը

4.1 Սույն պայմանագրով փոխհատուցման ենթակա ծախսերի արժեքը կազմում է Տաշիր քաղաքի Վ.Սարգսյանի փողոց.94 հասցեում ջեռուցվող տարածքի փաստացի ծախսած գազի, չափի 14%-ի չափով:

4.2 Մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը ջեռուցման համար կատարված փաստացի ծախսի հիման վրա, Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում հաշվետու ամսվա ընթացքում Պատվիրատուի ջերմային էներգիայի համար հաշիվ:

4.2 Փոխհատուցման ենթակա ծախսերի դիմաց հաշվարկները կատարվում են հանձնման –ընդունման ստորագրման պահից ոչ ուշ, քան 3 օր հետո:

4.3 Փոխհատուցման ենթակա ծախսերի համար Պատվիրատուն պետք է վճարի մինչև հաջորդ ամսվա 15-ը: Չվճարված յուրաքանչյուր օրվա համար կտուգանվի պարտքի 0.14% չափով:

5 Պայմանագրի գործողության ժամկետը

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից և գործում է անժամկետ:

5.2 Սույն համաձայնագրի գործողությունը տարածվում է Կողմերի միջև 2015 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

5.3 Սույն պայմանագիրը կարող է ժամկետից շուտ լուծվել կողմերից յուրաքանչյուրի կողմից՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ նախազգուշացնելով:

6. Այլ պայմաններ

6.1 Սույն պայմանագիրը կնքված է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7. **Կողմերի հասցեները և վավերապայմանները**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՍՀՆ ՀՊԳ Տաշիրի ՀՏԿ	**Տաշիրի քաղաքապետարան**
Հասցե՝ ք.Տաշիր,Վ.Սարգսյանի 94	Հասցե՝ ք.Տաշիր,Վ.Սարգսյանի 94
Բանկը՝ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Բանկը՝ Տաշիր ՏԳԲ
Հ/Հ900011102044	Հ/Հ 900275081108
ՀՎՀՀ 01506515	ՀՎՀՀ 07200536
Աշխատակազմի ղեկավար	Քաղաքապետ
Ա.Գրիգորյան	Ս.Արշակյան
ԿՏ	ԿՏ

900275081132